

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Հունիսի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական ու բացասական շեղումներով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 1-ին, 2-ին. Տավուշում գրանցվել է +29…+31^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +23…+25^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +33…+35^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +34…+36^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +26…+28^{0}C, Շիրակում՝ +21…+24^{0}C (Գյումրի՝ +28^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +23…+26^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +28…+30^{0}C, Գեղարքունիքում՝ +22…+25^{0}C, Լոռիում՝ +22…+27^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +33…+35^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +22…+24^{0}C, նախալեռներում՝ +16…+21^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 8-ին. Շիրակում գրանցվել է +4…+6^{0}C (Աշոցք՝ -0,7^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +4…+6^{0}C (Հանքավան՝ 1^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +9…+11^{0}C, Տավուշում +10…+12^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +3…+5^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +9…+11^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +11…+15^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +5…+7^{0}C, Գեղարքունիքում՝ +2…+7^{0}C (Գավառ, Մասրիկ՝ +1^{0}C), Լոռիում՝ +4…+8^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +10…+13^{0}C (Մերձավան՝ 16^{0}C), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +1…+4^{0}C, նախալեռներում՝ +8…+13^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 1-12մմ (3-36%), Լոռիում՝ 1-33մմ (2-89%), Տավուշում՝ 12-13մմ (39-48%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 4-15մմ (17-47%), նախալեռներում՝ 1-3մմ (20-27%), Գեղարքունիքում՝ 9-53մմ (39-265%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 1-28մմ (5-140%), նախալեռներում՝ 1մմ (8%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 29մմ (132%), նախալեռներում՝ 3մմ (25%), Արմավիրում՝ 0,2-2մմ (2-29), Արարատում՝ 0,3-11մմ (13-110%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 4-37մմ (36-154%), նախալեռներում՝ 17-46մմ (89-135%):

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Հանրապետությունում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը:

Հովտային շրջաններում սկսվել է ծիրանի հասունացումը և շաքարանյութի կուտակումը, կատարվել է ընտրովի բերքահավաք:

Աշնանացան ցորենը շարունակել է գտնվել կաթնային հասունացման փուլում, բանջարանոցային մշակաբույսերի մոտ սկսվել է ծաղիկների թառամումը:

Նախալեռնային և լեռնային շրջաններում շարունակվել է պտղատուների պտղի ձևավորումը, կարտոֆիլի ծաղկումը, առաջացել են կաղամբի տերևները: